

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ԱՅՍՈՒՇԵՏ՝ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-1/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ  
ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի գանձումը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողագավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

– միջնակարգ կրթություն

– սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

– համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանան 2013 թվականի հունիսի 10-ին՝ ժամը 14:00-ին՝ Դոդսի գյուղապետարանում, որը գտնվում է մշակույթի տան շենքում / հասցե՝ Գ.Դոդս, Բաղրամյան 1-ին նրբանցք 6/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Դոդսի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

– դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

– տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

– հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

– հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

– արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

– մեկ լուսանկար 3×4 չափսի,

– անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի գյուղապետարան / հեռ.՝ 077-62-42-62/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ քաղ. Արմավիր , Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, - 2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ մայիսի 20-ը ներառյալ 2013 թվական:

Գ.Դոդս

2013 մայիսի 6